

ՀՌՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

Երևան, 21-ը հոկտեմբերի 2019թ.

ՀՌՉԱԿԱԳԻՐ

Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի

Ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Երևանում 2019թ. հոկտեմբերի 11-12-ին կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի իրավապաշտպանության 9-րդ WE CAN տարածաշրջանային համաժողովի Հայաստանի պատվիրակության մասնակիցների կողմից (այսուհետ՝ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանց/ՀՕՊՑ):

Մենք, վերոհիշյալ միջազգային համաժողովի մասնակիցներս, լինելով ՀՕՊՑ-ի անդամներ, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կառույցներ, անհատներ և քաղցկեղ ունեցող ու հաղթահարած անձինք, զբաղվելով օնկոպացիենտների շահերի պաշտպանությամբ, մտահոգված լինելով ՀՀ-ում չարորակ նորագոյացությունների տարածվածությամբ և ողջ բնակչության շրջանում քաղցկեղի դեպքերի շարունակական աճով՝ նպատակադրվել ենք համատեղ ուժերով աշխատել քաղցկեղը կանխարգելելու, օնկոպացիենտներին անհատական աջակցություն ցուցաբերելու, քաղցկեղի բուժման ու խնամքի հասանելիության, առողջապահական ու սոցիալական իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Քաղցկեղը սահմաններ չի ճանաչում: Այն շարունակում է մնալ մարդկության գոյաբանական խնդիրներից մեկը, որը վտանգում է մարդկության բնականոն գոյատևումը:

Մենք հանձն ենք առնում համատեղ ուժերով իրականացնել քաղցկեղը կանխարգելելու և բուժելու հնարավորությունների մասին ՀՀ-ում ազգաբնակչության լայն զանգվածների իրազեկում՝ մասնակցելով միջազգային տարատեսակ կառույցների կողմից իրականացվող արշավներին, ծրագրերին ու աշխատանքներին:

Ելնելով վերոնշյալից՝ մենք կոչ ենք անում ՀՀ կառավարությանը, ՀՀ Առողջապահության նախարարությանը, ՀՀ Ազգային ժողովին, Երևանի պետական բժշկական համալսարանին, պետական և ոչ պետական շահագրգիռ կազմակերպություններին՝

ՀՌՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

1. աջակցել օնկոպացիենտների շահերի պաշտպանների ամենամյա համաժողովների կազմակերպմանը, որոնք շարունակաբար համախմբելու են բոլոր շահակից կողմերին և տարեց-տարի ընդլայնելու են հայաստանյան ցանցը և դրա գործունեության ներուժն ու աշխարհագրությունը,
2. ՀՀ համապատասխան օրենսդրությամբ կարգավորել քաղցկեղային հիվանդությունների բուժման մեջ կիրառվող, ժամանակակից ուղեցույցներում ընդգրկված, թիրախային դեղամիջոցների ազատումն ԱԱՀ-ից, որը հնարավորություն կտա բարձրացնել այդ դեղերով բուժման հասանելիությունը, ինչպես նաև օնկոպացիենտների համար ապահովել ԱՀԿ-ի կենսականորեն անհրաժեշտ դեղերի ցանկում ընդգրկված դեղերի հասանելիությունը՝ պետպատվերի շրջանակներում,
3. ՀՀ-ում ներկայումս իրականացվող արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգի և 2020-2021թթ. իրականացվելիք կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի ծրագրերի շրջանակներում հայտնաբերված ցանկացած քաղցկեղի դեպքում պացիենտին պետպատվերի շրջանակներում ապահովել լիարժեք բուժման փաթեթով՝ այդ թվում վիրահատական բուժում, քիմիաթերապիա, ճառագայթային բուժում, թիրախային թերապիա,
4. պացիենտ-բժիշկ և պացիենտ-բուժքույր փոխհարաբերությունների բարելավման և ապագա բժիշկների ու բուժքույրերի հաղորդակցումը պացիենտների հետ ավելի հմուտ և արդյունավետ կազմակերպելու նպատակով «Հոգեբանություն» առարկան ԵՊԲՀ-ի ուսումնական պլանում 2-րդ կուրսից տեղափոխել 5-րդ կամ 6-րդ կուրս, ինչպես նաև հետևելով զարգացած երկրների ու ԲՈՒՀ-երի փորձին՝ ներմուծել նոր առարկա՝ «Հաղորդակցման հմտություններ», ինչպես նաև բուժքույրական կրթական հաստատությունների ուսումնասկան պլանում ավելացնել «Հոգեբանություն» և «Հաղորդակցման հմտություններ» առարկաները և պալիատիվ խնամքի դասընթաց,
5. պետական քաղաքականության մակարդակով իրականացնել խորացված ապացուցողական ուսումնասիրություններ ՀՀ-ի հանքարդյունաբերական կենտրոններում, ազդակիր և դրանց մոտ գտնվող համայնքներում (Ալավերդի, Ախթալա, Շնող, Թեղուտ, Մեծ Այրում, Շամլուղ, Օձուն, Մդարթ, Վարդենիս, Սոթք, Կապան, Քաջարան, Արծվանիկ, Սյունիք, Գեղանուշ համայնքներում և Արարատի մարզի համայնքներում)՝ պարզելու հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի աղտոտվածության ազդեցությունն այդ տարածքներում բնակվող մարդկանց առողջության վրա՝

ՀՌՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

այդ տարածքներում իրականացնելով քաղցկեղի հիվանդացության ու մահացության ցուցանիշների համադրում և պարզելու դրանց միջև պատճառահետևանքային հնարավոր կապը,

6. ապահովել ՀՀ բնակչության շրջանում չարորակ նորագոյացություններով ախտորոշված բոլոր դեպքերի լիարժեք ու բազմակողմանի գրանցում՝ մշակելով և վարելով միջազգային չափանիշներին համաձայն քաղցկեղի ազգային ռեգիստր,
7. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիներին և շահագրգիռ կազմակերպություններին ապահովել քաղցկեղի ազգային ռեգիստրից տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ՝ վիճակագրական տվյալները հասանելի դարձնելով ըստ քաղցկեղով ախտորոշված ՀՀ քաղաքացիների բնակչության վայրի, բուժումը կազմակերպելու փաստացի վայրի և այլ մանրամասների մասին, ինչպես նաև չարորակ նորագոյացությունների հետևանքով մահացության վիճակագրական տվյալները՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները (օնլայն տվյալների բազա և այլն),
8. պետպատվերով քաղցկեղի վիրահատական բուժում իրականացնող բուժհաստատություններում պարտադրել հոգեուռուցքաբանի հաստիքը՝ օնկոպացիենտներին բուժման ընթացքում հոգեբանական աջակցություն ապահովելու նպատակով,
9. բարելավել մարզային բուժհաստատությունների անձնակազմի կարողություններն ու հաղորդակցման որակը օնկոպացիենտների հետ տարվող աշխատանքներում, մասնավորապես հոգեբանական աջակցության, մասնագիտական նրբանկատության, էթիկայի և օնկոպացիենտներին օրենսդրորեն վերապահված օրենքների և իրավունքների վերաբերյալ խորհրդատվության մատուցման ասպեկտներում,
10. բոլոր մարզային պոլիկլինիկաններն ապահովել բժիշկ-ուռուցքաբան հաստիքներով, իսկ առկա թափուր հաստիքները համալրել համապատասխան ուռուցքաբան մասնագետներով,
11. մշակել և իրագործել չարորակ նորագոյացությունների մասին հանրային իրազեկման պետական ծրագիր՝ ուղղված ՀՀ-ում քաղցկեղի կանխարգելմանը, քաղցկեղով հիվանդացության նվազեցմանը, քաղցկեղի

ՀՌՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

վաղ հայտնաբերմանը, ՀՀ-ում քաղցկեղի բուժման հասանելի տարբերակների և պետական աջակցության ծրագրերի մասին քաղաքացիների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,

12. լրամշակել ու փոփոխություններ կատարել հանրային առողջության պահպանման վերաբերյալ օրենսդրական փաթեթում, քանզի հանրային առողջապահության մի շարք բաղադրիչների՝ առողջ ապրելակերպի, առողջ սննդի և միջազգայնորեն ընդունված այլ տարրերի օրենսդրորեն սահմանումն ու կիրառումը նպաստում են չարորակ նորագոյացությունների կանխարգելմանը:

Մենք՝ ներքոստորգրյալներս, ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կոչ ենք անում ուշադրություն դարձնել ՀՀ-ում չարորակ նորագոյացությունների տարածվածությանն ու դրանց բուժման խնդրին, ինչպես նաև համատեղ ջանքերով ապահովել տեղեկատվության մատչելիությունն ու հասանելիությունը և այս ոլորտում նպաստել մասնակցային որոշումների կայացմանը:

1. «ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամ, օնկոպացիենտների շահերի պաշտպանության կազմակերպություն, Մարտիրոսյան Հռիփսիմե, քաղցկեղ վերապրած, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
2. «Առողջության կամուրջ Արմենիա» մանկական քաղցկեղի բուժման աջակցության հիմնադրամ, Բարսեղյան Անահիտ, քաղցկեղից ապաքինվածի ծնող, Երևան
3. «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ, Զոփունյան Վիոլետա, Երևան
4. «ՍՈՆԴԵՐՍ ԿԵՆՏՐՈՆ» առողջապահական ՀԿ, Մովսիսյան Նարինե, պալիատիվ խնամքի փորձագետ, Երևան
5. «ՁԵՌՔ ՁԵՌՔԻ» առողջության պահպանման հայկական ասոցացիա ՀԿ, Օհանյան Օլյա, քաղցկեղ վերապրած, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Իջևան, Տավուշ
6. «ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔ» իրավական և սոցիալական զարգացման ՀԿ, Կիրակոսյան Արմենուհի, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Ճամբարակ, Գեղարքունիք
7. «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» ՀԿ, Պետրոսյան Հռիփսիմե, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Կրաշեն, Շիրակ
8. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, Դուլգարյան Օլեգ Հայկազի, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Ալավերդի, Լոռի

ՀՈՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

9. «ՖՐԵՆԴՍ ՀՈՍ» ՀԿ, Բեգլարյան Դիանա, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
10. «Համայնքի ապավեն կանանց և երիտասարդների աջակցման կենտրոն» ՀԿ, Ասատրյան Անիկ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Զանգակատուն, Արարատ
11. «ԱՐՄԱՇ» գյուղական համայնքների աջակցման և զարգացման կենտրոն ՀԿ, Մաթևոսյան Տիգրան, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Արմաշ, Արարատ
12. «ՏԱԹԵՎԻԿ» բարեգործական ՀԿ, Պետրոսյան Լյուսյա, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Մարալիկ, Շիրակ
13. «ՏԱՐՈՆ» երիտասարդական զարգացման ՀԿ, Դիլանյան Հերմինե, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Ներքին Խնձորեսկ, Սյունիք
14. «Թալինի կանանց ռեսուրս կենտրոն» զարգացման հիմնադրամ, Խաչատրյան Գայանե, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Թալին, Արագածոտն
15. Քաղցկեղի դեմ պայքարի եվրոպական լիգաների ասոցիացիա, Տեր-Հովհաննիսյան Վաղինակ, Հայաստանի երիտասարդ դեսպան, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
16. Սողոյան Քնարիկ, քաղցկեղից բուժվող պացիենտ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
17. Գիշյան Լիլիթ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Նոյեմբերյան, Տավուշ
18. Դավթյան Էլեն, ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, կլինիկական հոգեբանություն, ՀՈԻՀԱ անդամ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
19. Սահակյան Լուիզա, քաղցկեղ վերապրած, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
20. Ալեքսանդրովա Մարիա, բուժքույր-անեսթեզիստ, Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն, Բուժքույրական պալիատիվ խնամքի ծրագրի համակարգող, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
21. Հուռումյան Արմենուհի, օնկոպացիենտի ընտանիքի անդամ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Ստեփանակերտ, Արցախ
22. Լազարյան Մարինե, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Ստեփանակերտ, Արցախ
23. Աբգարյան Աննա, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
24. Մարտիրոսյան Մարինե, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան
25. Մուղդուսյան Մարիամ, օնկոպացիենտների շահերի պաշտպան, Երևան

ՀՌՉԱԿԱԳԻՐ Հայաստանի օնկոպացիենտների պաշտպանության ցանցի (ՀՕՊՑ)

26. Հոգեուռուցքաբանության հայկական ասոցիացիա (ՀՈՒՀԱ), Եվա Ասրիբարայան
27. «Ֆոնդ 100» մանկական քաղցկեղի բուժման աջակցության հիմնադրամ, Տիգրան Բալոյան
28. ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյան
29. Երիտասարդ ուռուցքաբանների խումբ
30. Մանկական արյունաբանության և ուռուցքաբանության խումբ
31. Արյունաբանության և ուռուցքաբանության հայկական ասոցիացիա

ՀՌՉԱԿԱԳԻՐԸ բաց է, ցանկացած ՀԿ կամ անհատ, որ մտահոգված է Հայաստանում օնկոպացիենտների իրավունքներով ու շահերով, կարող է միանալ: